

DOI: 10.57192/18291864-2023.3-253

## ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԹՌՈՒՑԻԿԸ

1885 թ. փետրվարին հայկական դպրոցների փակման կապակցությամբ\*

**Քանալի բառեր** – հայոց եկեղեցական-ծխական դպրոցներ, կրթական գործ, դպրոցների փակում, ուժացման քաղաքականություն, Թիֆլիսի հայ ազգային-նաբողոքական խմբակ, թռուցիկ, հետաքննություն:

Անդրկովկասին տիրելուց հետո հիմնելով պետական ուսումնական հաստատություններ՝ ցարական կառավարությունը նպատակ ուներ բարձրացնելու ռուսաց լեզվի դերը տարածաշրջանում՝ նպատակելով նրա տարածմանը, ռուսական գահի հանդեպ սերմանելով հպատակության ու հավատարմության զգացումներ և նախապատրաստելով որոշակի մասնագիտական որակավորում ունեցող անձանց վարչական պաշտոններ վարելու համար:

Անդրկովկասյան երկրամասում դպրոցական գործը սկսեց աշխուժանալ 1860-ական թվականներից՝ քիչ թե շատ կանոնավորվելով և աստիճանաբար հեռանալով խալիֆայական դպրոցներին հատուկ ձևից: 1870-ական թթ. սկզբից հայոց եկեղեցական-ծխական դպրոցները զգալի առաջընթաց ապրեցին. աշխարհաբար լեզուն և աշխարհաբար դասագրքերը թափանցեցին հայկական դպրոց, սկսեցին դասավանդվել բնական գիտությունները: Այս յուրահատուկ դպրոցական շարժման պաշտոնական ներկայացուցիչն ու առաջնորդողը հոգևոր բարձրագույն իշխանությունն էր՝ Ամենայն հայոց կաթողիկոսի գլխավորությամբ:

\* Ընդունվել է տպագրության 12.09.2023:

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԵ (ԻԱ) տարի, թիվ 3 (83), հուլիս-սեպտեմբեր, 2023

Անդրկովկասի հայության դպրոցական կյանքում սկսված վերջնաօգր ենթադրում էր նաև դպրոցների թվի ավելացում: Այսպես՝ եթե 1866 թ. Երևանի թեմում գործում էին 14 ծխական դպրոցներ (12 արական, 2 իգական)<sup>1</sup> 993 աշակերտով (923 տղա, 70 աղջիկ)<sup>1</sup>, ապա 1879–1880 ուս. տարում, Երևանի նահանգի և Կարսի մարզի թեմական տեսուչ Պերճ Պռոշյանի կազմած մանրամասն տեղեկագրի համաձայն, Երևանի թեմում արդեն գործում էին 97 հոգևոր միջնակարգ<sup>2</sup> և եկեղեցական–ծխական դպրոցներ (81 արական, 16 օրիորդաց), որոնցում կրթություն էր ստանում 4902 աշակերտ (4010 տղա, 892 աղջիկ), և դասավանդում էր 184 ուսուցիչ (155 ուսուցիչ, 29 ուսուցչուհի)<sup>3</sup>: Մինչև 1885 թվականը դրանց թիվն ավելացավ ևս 4-ով՝ դառնալով 101:

Ցարական կառավարությունը, սակայն, չէր կարող պասիվ դիտորդի դեր ստանձնել օրեցօր թափ հավաքող կովկասահայ դպրոցների աննախադեպ զարգացման պայմաններում: 1870-ական թվականներից սկսած՝ Ռուսական կայսրության մեջ դպրոցների նկատմամբ վերահսկողությունն ավելի ու ավելի խիստ ձևեր է ընդունում: Դա վերաբերում էր նաև հայկական ծխական դպրոցներին: 1873 թ. նոյեմբերի 22-ին հրապարակ իջած օրենքով փորձ էր արվում այլադավան եկեղեցիների ծխական, միջնակարգ և հոգևոր դպրոցների վերահսկման իրավասությունը վերցնելու հոգևոր իշխանություններից: Հայ հոգևորականությունը՝ Ամենայն հայոց կաթողիկոսի գլխավորությամբ, դժգոհությամբ ընդունեց նոր օրենքը և չէր շտապում գործադրելու այն: Գևորգ Դ կաթողիկոսը, խորհրդակցության հրավիրելով Մինոդի անդամներին, հրահանգում է նրանց և թեմական առաջնորդներին չկատարել հայոց դպրոցների վերաբերյալ կառավարության իջեցրած հրամանները<sup>4</sup>: Կովկասի կառավարչապետը մի քանի գրություններով Գևորգ Դ կաթողիկոսից խնդրել էր հոգևոր դպրոցների ցուցակը, որպեսզի դրանք հանձնվեին պետական

1 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 935, թ. 4:

2 Միջնակարգ դպրոցներն էին Երևանի Գայանյան և Ալեքսանդրապոլի քաղաքային օրիորդաց դպրոցները, Ալեքսանդրապոլի ու Կարսի հոգևոր արական դպրոցները, Տաթևի ու Հադիձի վանական դպրոցները:

3 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 7278, թթ. 17– 41:

4 Կաթողիկոսի հրահանգը տրվել է բանավոր, առանց արձանագրության: Այդ մասին Կովկասի կառավարչապետին 1874 թ. մարտի 7-ի գաղտնի գրությամբ հայտնել է Մինոդի դատախազը (տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 1087, թ. 1 և շրջ.):

դպրոցների տեսչության վերահսկողությամբ: Շատ չանցած՝ Կովկասի կառավարչապետը պարզաբանել է հայոց կաթողիկոսին, որ հայ հոգևոր դպրոցները (բացի թեմականներից) անցնելու էին պետական տեսչությունների իշխանության տակ, բայց ահա դրանց նյութական ապահովությունը պետք է հոգային եկեղեցին և ժողովուրդը: Դպրոցների ուսումնական ծրագրերի մշակման, դասավանդման եղանակների որոշման, ուսուցիչների՝ աշխատանքի ընդունման և ազատման իրավունքը փաստացի վերցվում էր հոգևոր իշխանությունից և հանձնվում տեսչություններին, և, բնականաբար, Ամենայն հայոց կաթողիկոսը չէր կարող հաշտվել նման օրենքի հետ:

1884 թ. փետրվարի 16-ին ցարը հաստատեց հայկական եկեղեցական դպրոցների նոր կանոնները<sup>5</sup>, որոնցով զգալիորեն սահմանափակվում էին Մայր Աթոռի իրավունքները հայ երեխաների կրթության գործում, մասնավորապես տարրականից բարձր բոլոր դպրոցները պետք է անհապաղ անցնեին ուսումնական վարչության հսկողության տակ, այլ խոսքով՝ պետականացվեին: Ելնելով դրանից՝ 1885 թ. փետրվարին Ռուսական կայսրության տարածքում փակվեցին նոր կանոնները չընդունող բոլոր դպրոցները: Այսպես, օրինակ, ըստ Կարսի և Բաթումի նահանգի հայոց հոգևոր գործերի կառավարիչ Գրիգորիս եպիսկոպոս Աղվանյանի՝ 1885 թ. սեպտեմբերի 9-ին Մակար Ա կաթողիկոսին ուղղած զեկուցագրի, 1885 թ. փետրվարից Կովկասի իշխանությունների հրամանով փակվել են վիճակի բոլոր հոգևոր դպրոցները<sup>6</sup>: Նմանատիպ բովանդակությամբ զեկուցագրեր են ստացվել նաև Վրաստանի և Իմերեթի հայոց առաջնորդ Արիստակես եպիսկոպոսից, Շամախիի հայոց առաջնորդ Թադևոս եպիսկոպոսից, Աստրախանի հայոց առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսից և մնացած թեմերից ու փոխանորդություններից<sup>7</sup>: Միայն Արցախի թեմում փակվել են 23 եկեղեցական-ծխական դպրոցներ (20 արական, 3 օրիորդաց), որոնցում կրթություն էր ստանում 1401 սան (1133 տղա և 268 աղջիկ)<sup>8</sup>:

5 Նոր կանոններն առաջարկել էր լուսավորության նախարար, հայագրի Ի. Դելյանովը:

6 Տե՛ս նույն տեղում, ց. 15, գ. 50, թթ. 11-12 շրջ.:

7 Տե՛ս նույն տեղում, թթ. 13-43, 61-68:

8 Տե՛ս նույն տեղում, թ. 60 և շրջ.:

Հայության գիտակից հատվածը հոգևորականության հետ միասին ընթուստացավ հայ կրթական օջախների նկատմամբ ոտնձգությունների դեմ: Ի թիվս այլոց՝ Թիֆլիսի հայ ազգային-նարողնիկական խմբակը տարածեց «**ՀԱՅ ԵՂԱՅՐՆԵՐ ԵՒ ՀԱՅ ՔՈՅՐԵՐ**» վերտառությամբ թռուցիկը, որի հեղինակը Ագուլիսում իր քառամյա ուսուցչությունից հետո կրկին Թիֆլիս վերադարձած **Քրիստափոր Միքայելյանն** էր, որին այդ հարցում օժանդակել էր հայ ազգային-նարողնիկական խմբակի մյուս առանցքային անդամը՝ **Գաբրիել Միրզոյանը**: Այդ թռուցիկում, նախ պարզաբանելով դպրոցի ու կրթության դերը ազգային ինքնության պահպանման և առաջընթացի գործում, խիստ քննադատության էր ենթարկվում ցարական իշխանությունների վարած ուժացման քաղաքականությունը, և կոչ էր արվում հայությանը բոլոր միջոցներով պայքարելու ռուսաց բռնակալների դեմ, որոնք սովոր էին ծծել հպատակ ժողովուրդների «**բոլոր կենսական ոյժերը և ապա դէն շարտել նրանց քամած լիճոնի պէս** (ընդգծումը մերն է – Գ. Ա.)»<sup>9</sup>:

**Քրիստափոր Միքայելյանի կազմած այս առաջին թռուցիկում հայ հեղափոխականի աննկուն կամքն ու հզոր ոգին են փոթորկում:** Դրա յուրաքանչյուր նախադասություն չվախենալու, չընկրկելու և պայքարի կոչ է հայ ժողովրդին հերթական անգամ խաբած բռնակալության դեմ. «Այո՛, մի քանի տասնեակ տարի առաջ ռուսաց մի բռնակալ կայսեր յատուկ ստորագրութեամբ մեզ խոստանում էին ԱՐԱՐԱՏԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ ԱՆԿԱԽՈՒԹԻԻՆԸ. խոստանում էին Անիին, Վաղարշապատին վերադարձնել իրենց վաղեմի կեանքը, փառքն ու իշխանութիւնը, սակայն ամենաանազնի կերպով ուրացան իրենց ստորագրութիւնը, և այդ բաւական չը համարելով՝ այսօր էլ մի ուրիշ բռնակալ Անիի բեկորներին աւելացնում է և մեր դպրոցների աւերակները»<sup>10</sup>: Թե որքան արդիական են այս խոսքերը, ավելորդ է անգամ մեկնաբանել: Պարզապէս պետք է կարդալ «**ՀԱՅ ԵՂԱՅՐՆԵՐ ԵՒ ՀԱՅ ՔՈՅՐԵՐ**» թռուցիկն ամբողջությամբ:

Հարկ է նաև ամենայն ուշադրությամբ ուսումնասիրել Հայաստանի ազգային արխիվում՝ «Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչություն» (թիվ 1263) ֆոնդում պահվող գործը, որը վերաբերում է վե-

9 Նույն տեղում, ֆ. 1263, ց. 2, գ. 53, թ. 3 և շրջ.:

10 Նույն տեղում:

րոհիշյալ թռուցիկի առնչությամբ սկսված հետաքննությանը: 1885 թ. ապրիլ-մայիս ամիսներին Թիֆլիսի ժանդարմական վարչության պետ, գեներալ-մայոր Վ. Յանկովսկին Թիֆլիսի նահանգապետ, գեներալ-մայոր Ա. Գրոսմանից և Ելիզավետպոլի նահանգապետ, գեներալ-մայոր, իշխան Ա. Նակաշիձեից ստացել էր գաղտնի գրություններ, որոնցում հաղորդվում էր ինչ-որ թռուցիկի մասին, և դրա հեղինակներին բացահայտելու խնդիրն էր առաջադրվում: Թռուցիկներից մեկը հայտնաբերվել էր Թիֆլիսի 3-րդ քաղաքամասում գտնվող զինվորական շուկայի մասվաճառներին հատկացված մասում կապիտան Եվգենի Դոբրովոլսկու կողմից, որն ապրիլի 3-ին այն ներկայացրել էր Թիֆլիսի ոստիկանապետին: Վերջինս իր հերթին այն ուղարկել էր Թիֆլիսի ժանդարմական վարչության պետ, գեներալ-մայոր Վ. Յանկովսկուն: Մյուս թռուցիկը ստացել էր Երևանի և Ելիզավետպոլի նահանգների ժողովրդական ուսումնարանների տնօրեն Դ. Օրլովը ծառայողական փոստով: Տարածողը հայ ազգային-նարողնիկական խմբակի անդամ **Ղազախեցի Մելսակն** էր, ով որոշ ժամանակ անց հիմնված ՀՅ Դաշնակցության շարքերում հայտնի է **Բիճա** ծածկաւունով:

Ցարական իշխանությունները, զգուշանալով ժողովրդական հուզումներից և անցանկալի իրադարձությունների հետագա զարգացումից, տեղի տվեցին, և 1886 թ. բարձրագույն հրամանով հայոց եկեղեցական-ծխական դպրոցները վերաբացվեցին: Կովկասի կառավարչապետ, գեներալ-ադյուտանտ, իշխան Դունդուկով-Կորսակովը Մակար Ա Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղած 1886 թ. մարտի 7-ի գրությամբ հայտնում էր, որ նրան իրավունք է տրվում բացելու հայոց մեկդասյա և երկդասյա եկեղեցական-ծխական դպրոցները և «կառավարել նորանց իւր ազատ բարենկատողութեամբ նշանակուած ուսուցիչներով, միայն սոցա մասին տեղեկութիւններ հաղորդելով Տ. հոգաբարձուի Ուսումնարանական շրջան. Կովկասու»<sup>11</sup>:

Հրապարակվող գործում իբրև իրեղեն ապացույց պահպանվել է անգամ թռուցիկի բնագիր օրինակը:

Ստորև ներկայացնում ենք վերոհիշյալ գործին առնչվող բոլոր փաստաթղթերը: Բացի 1-ին փաստաթղթից՝ մյուսների բնագրերը ռուսերեն են, որոնք թարգմանվել են հայերեն:

**Գոհար Գ. Ավագյան**  
Պատմ. գիտ. թեկնածու

<sup>11</sup> Նույն տեղում, ֆ. 56, ց. 15, գ. 113, թթ. 15, 24-25:

**ՀԱՅ – ԵՂՔԱՅՐՆԵՐ ԵՒ ՀԱՅ – ՔՈՅՐԵՐ**

Այսօր ամենփոքր առաջ կատարվում է մի սարսափելի աւազակութիւն, մի յանդուգն բաշխուցումներ<sup>12</sup>, մի խայտառակ բռնաբարութիւն՝ ՌՈՒՍԱՑ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԻՐԵՆ ՅԱՏՈՒԿ ԲՈՒՆԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՓԱԿՈՒՄ Է ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ:

Թեթևամիտ տղաները, դէպի ամէն սուրբ բան անտարբեր վերաբերուող հաստափոր բուրժուաները, մեր պճնասէր տիկիներն ու օրիորդները, վերջապէս ոգուով և մարմնով ապականուած՝ իրեն ինտելիգենցիա անուանող դասը իհարկէ թեթև, շա՛տ թեթև աչքով են նայում այդ անօրէն կերպիւ կատարուող իրողութեան վերայ: Բայց արդէօք հե՛շտ է տանել այդ հարուածը. մի՞թէ պէտք է անտարբեր նայենք մենք՝ Հայերս՝ այդ անխիղճ անարդարութեան վերայ. ահա հարցը ինչու՞մն է:

Մեր ուսումնարանը և Ազգային եկեղեցին, կարելի է ասել, հէնց առաջին դարերից սկսած այնպիսի սերտ կապերով էին միացել իրար հետ, որ կարծէք թէ անկարելի էր մէկը առանց միւսի ենթադրել անգամ: Մեր ուսումնարանը մեզ համար Սուրբ Տաճարի պէս մի սրբավայր էր, մեր փառաւոր անցեալից մեզ մնացել էր երկու սրբութիւն՝ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ: Այդ երկու սրբութիւններն էին, որ պահպանելով մեր լեզուն, պահպանեցին նաև մեզ, իբրև մի ամբողջ Ազգութիւն:

Մենք, եղբայրներ՛ր և քոյրեր՛ր, լաւ էինք հասկացել, որ մեր Ազգային դպրոցից և Ազգային եկեղեցուց դուրս չ'կայ փրկութիւն մեզ համար... Առանց այդ երկու ամենագօրեղ Ազգային հիմնարկութիւնների մենք շատ վաղուց կը լուծուէինք կ'անհետանայինք աշխարհի երեսից – կուլ կը գնայինք:

Եւ ահա՛ այսօր, երբ մեր Ազգային դպրոցը՝ հին սխօլաստիքայի կապանքներից նոր ազատուած՝ պէտք է իրականապէս ցոյց տար իր ոյժի մեծութիւնը, այդ վաղուց փայփայեած բոպէին յայտնվում է մի

---

<sup>12</sup> Բաշխուցում – թուրքական անկանոն գործ, որ բազում անգույթ արարքներ էր գործում: Փխք.՝ վայրագ, անկարգ:

բռնակալ և ձեռքի մի շարժումով ոչնչացնում է այն, ինչ որ մենք դարերի ընթացքում հազիւ կարողացել ենք բարեկարգել:

Բռնակալ Աղէքսանդր Երրորդը քարուքանդ է անում Հայոց դպրոցը. մի ահագին պետութեան թագաւորը պատերազմ է յայտնում մի փոքրիկ ազգութեան: Բայց ինչո՞ւ ենք զարմանում:

Ռուսաց բռնակալների քաղաքականութիւնը վաղուց յայտնի է ամենքիս – զանազան արտօնութիւններ տալով՝ իրեն հպատակացնել փոքրիկ ազգութիւնները, նրանց հազար ու մի խոստմունքներ անելով, գալազիրներ գրելով, իսկ հպատակացնելուց յետոյ՝ աշխատել փոքր առ փոքր ոչնչացնել տուած արտօնութիւնները, ծծել նրանց բոլոր կենսական ոյժերը և ապա դէն շարտել նրանց քամած լիմոնի պէս: Ինչ արեցին ռուսաց բռնակալները վրացիների հետ, այն են անում նաև Հայերիս հետ: Սկզբում խորամանկ խաբէբայութեամբ մեր միջոցաւ՝ մեր Արարատեան քաջերի արիւնով հաստատեցին իրենց պետութիւնը ամբողջ Անդրկովկասում, մեր արեան և ոսկերաց վերայ հիմնեցին իրենց բռնակալութիւնը Ռուսաստանի մի անապահով սահմանի վերայ և իրենց շտիկներով<sup>13</sup> շրջապատեցին նաև մեզ, այնուհետև այդ շտիկները դարձրին և դէպի մեր կրծքերը: Այո՛, մի քանի տասնեակ տարի առաջ ռուսաց մի բռնակալ կայսեր յատուկ ստորագրութեամբ մեզ խոստանում էին ԱՐԱՐԱՏԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ ԱՆԿԱՄՈՒԹԻԻՆԸ. խոստանում էին Անիին, Վաղարշապատին վերադարձնել իրենց վաղեմի կեանքը, փառքն ու իշխանութիւնը, սակայն ամենաանազնիւ կերպով ուրացան իրենց ստորագրութիւնը, և այդ բաւական չը համարելով՝ այսօր էլ մի ուրիշ բռնակալ Անիի բեկորներին անելացնում է և մեր դպրոցների աներակները:

Սիրելի՛ եղբայրներ և քոյրեր, ի սէր Ազգութեան և մեր Ազգային եկեղեցւոյ, լաւ կշռեցէք այսօր կատարուող իրողութիւնը. լաւ իմացէք, որ դա մեզ, ռուսահայերիս, համար մահու և կենաց խնդիր է:

«Ի՞նչ կարող ենք անել մենք, կը պատասխանէք դուք, քանի որ այսօր նոյն իսկ հարիւր միլիօն ռուս ժողովուրդը տնքում է իւր բռնակալի լծի տակ»:

Այո՛, հարիւր միլիօնից բաղկացած այդ ժողովուրդը նոյնպիսի գոհեր են իրենց բռնակալների ձեռքում, որպիսին և մենք ենք, բայց մի՛ սոռանաք, որ այդ ժողովուրդը այսօր թէ վաղը կարող է ազատուել

13 Շտիկ – սվին, որ հագնում են հրացանի փողի ծայրին, խշտիկ:

այդ լծից և ի հարկէ այդ ազատութիւնը ձեռք բերելու համար նա գործում է, միջոցների է դիմում, վերջապէս այդ բազմաթիւ ժողովուրդը ճնշուած է աւելի տնտեսական կողմից և նա, պահպանելով իւր լեզուն, պահպանում է և իւր միութիւնը, իւր ամբողջութիւնը:

Ռուսաց բռնակալները ի հարկ է շատ լաւ էին հասկանում և հասկանում են, որ փոքրիկ ազգութիւնները խեղդելու համար պէտք է ոչնչացնել նորանց և՛ լեզուն, և՛ եկեղեցին: Վրացիների հետ այդպէս վարուեցին՝ դեռ ոչնչացրին նորանց առանձնացած եկեղեցին, միացնելով իրենց հետ, իսկ այժմ ձեռք տուին նորանց լեզուին, բայց հայերիս հետ վարում են այլ կերպով. դեռ քանդում են մեր Ազգային դպրոցները, նորանց հետ մեր քաղցր լեզուն և ապա՝ դիմեն մեր եկեղեցուն, որի վերաբերմամբ մինչև այսօր մի փոքրիկ գոյշ են վարուել, որովհետև մեր եկեղեցին շատ ինքնորոյն է, և այդ չափ հեշտ չէ նրան կլանել:

Ռուսաց միապետը առաջարկում է մեզ՝ կամ մեր դպրոցները իրեն յանձնենք, կամ բոլորովին փակենք և այդ անում է մի այնպիսի ժամանակ, երբ մեր կաթողիկոսական գահից չէ հնչվում մեր Հայրապետի ձայնը, երբ այդ կաթողիկոսական գահից դեռ սև քողը չի վերացել<sup>14</sup>... Մինհօդոսը երկու-երեք ամիս ժամանակ էր խնդրում, որպէսզի մեր դպրոցների և եկեղեցու Տէրը՝ մեր միակ պարծանք կաթողիկոսը ինքը կարողանար վճռողական պատասխան տալ, բայց ռուսաց բռնակալը և նորա աջ ու ձախ ձեռքերը քաջ յայտնի Տոլստոյներ, Դելեանովներ, Դունդուկովներ, Եանօվսկիներ – այդ փոքրոգիները, դեսպօտների խորհրդածուները, վախուկ կառավարիչները իրենցն են պնդում, գուցէ վախենալով, որ կաթողիկոսի ընտրութիւնից յետոյ աւելի կը բարդուի ուսումնարանների հարցը:

Հայոց Ազգային ուսումնարանների շէնքերում արդէն փայլեցին ռուսաց շտիկներ, չրխկչրխկացին զինուորների շպօրներ<sup>15</sup>... Սարսափելի տեսարանը, մի կողմից անգութ դահիճներ, իսկ միւս կողմից անմեղ մանուկների, վարժուհիների և ուսուցիչների լաց ու կոծը:

Շտիկներով և շպօրներով, ռուսաց բռնակալներ, չը կարողացաք լեհացիներին մոռնալ տալ իրենց լեզուն, ձեր արշաւանքները մալա-

---

14 **Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի** կաթողիկոսը վախճանվել է 1882 թ. դեկտեմբերի 6-ին: Նրան հաջորդած **Մակար Ա Թեղուտեցու** ընտրությունը տեղի է ունեցել 1885 թ. ապրիլի 21-ին, օծումը՝ նոյեմբերի 10-ին:

15 Շպօր – մետաղից շինած խթան, որ հեծյալները հագնում են կոշիկների վրա:



բուսաների լեզուի դէմ նոյնպէս բոլորովին հակառակ արդիւնք ունեցան:

Հայեր, մի՞թէ այժմ էլ չեն բացուելու մեր աչքերը, մի՞թէ այժմ էլ մենք չը պէտք է հասկանանք ռուսաց բռնակալների բռնած ընթացքը Հայերի վերաբերութեամբ:

Տաճիկ բռնակալը յափշտակում էր մեր սեպհականութիւնը, մենք աղաղակում, գոռում, բողոքում էինք անիրաւութեան դէմ, բայց ռուս բաշիրուզուկը քանդում է մեր սրբավայրերը – մեր դպրոցները, պատերազմ յայտնում մեր լեզուին և մենք գլուխներս խոնարհեցրած ա՛խ ու վախ ենք քաշում միայն: Մեր լեզուները հանում են արմատից և մենք փոխանակ բռունցքը ցոյց տալու՝ մեր վիզերն էլ դնում ենք անամօթ դահճի կացնի տակ:

Եթէ այսօր մենք, հայերս, անկարող ենք դիմադրել խաբեբայ բռնակալներին, գոնէ մենք կարող ենք մահի վճիռ կարդալ այդ բռնակալների ձեռքի տակ գործող այն ստոր սողուններին, որոնք մեր լեզուն և նորա հետ նաև մեր ազգութիւնը մահու են դատապարտել:

Իսկ ինչ կը վերաբերի մեր ՀԱՅ լեզուի [տա]րածելուն՝ թո՛ղ անիծուի այսուհետև այն հայը, որ հանդիպելով մի այլ հայի, խօսի այլ լեզուով բացի՝ ՀԱՅԵՐԵՆԻՅ, թո՛ղ նզովուի՝ և յիմնայատակ կործանուի ա՛յն հայ ընտանիքը, ուր բացի հայերէն բարբառից, մի այլ հնչիւն լսուի, թո՛ղ արհամարհանքով և զգուանքով յիշուի ազգի և ապագայ սերունդի առաջ ա՛յն մայրը, որ իւր կաթի հետ չի սնուցանի զաւակին և իւր մայրենի բարբառը – Հայերէն լեզուն:

Մեր դպրոցները փակուում են շտիկների օգնութեամբ, թո՛ղ այդ լինի բռնակալների միակ մխիթարութիւնը:

ԻՐԻԱՔԱՆՁԻԻՐ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ ԹՈՂ ՆԵՐԿԱՅԱՑՆԻ ԻՐԵՆԻՑ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՅ ԴՊՐՈՑ:

Այսուհետև մեր միակ յոյսը թո՛ղ մենք ինքներս լինենք. այսուհետև էլ ուրիշի, մանաւանդ ռուսաց կառավարութեան վերայ վստահ չը լինենք և երբ իբրև ճշմարիտ հայ մեր սուրբ պարտքը կը կատարենք, այն ժամանակ, հաւատացե՛ք Հայեր, յաղթութիւնը արդարի կողմն է լինելու:

Յաղթութիւնը մերը կը լինի:

Ազատ տպարան, Փետրուարի 22 1885 թ.

ՀԱԱ, ֆ. 1263, ց. 2, գ. 53, թ. 3 և շրջ.:

№ 2

**ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Ա. Ի. ԳՐՈՍՄԱՆԻ  
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,  
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ. Օ. ՅԱՆԿՈՎՍԿՈՒՆ՝ «ՀԱՅ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՒ  
ՀԱՅ ՔՈՅՐԵՐ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ԹՌՈՒՅԻԿԸ ԵՎ ԴՐԱ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Թիվ 77

8 ապրիլի 1885 թ.

Թիֆլիս

Գաղտնի

Թիֆլիսի ժանդարմական վարչության պետին

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը ի գիտություն և դրանից կախված կարգադրություն անելու՝ առաքելու հայկական դպրոցների փակման առիթով գրված՝ զինվորական շուկայի մասվաճառներին հատկացված շարքերում հայտնաբերված «Հայ եղբայրներ և հայ քոյրեր» վերնագրով թռուցիկը<sup>16</sup> եւ դրա թարգմանությունը<sup>17</sup>:

Վերոգրյալի մասին գեկուցել եմ պ. գլխավոր հրամանատարին, և միննույն ժամանակ հանձնարարվել է Թիֆլիսի ոստիկանապետին միջոցներ ձեռնարկել մեղավորներին հայտնաբերելու ուղղությամբ:

Նահանգապետ

Գեներալ-մայոր Գրոսման<sup>18</sup>

Գրասենյակի պետ՝ Լյախով

ՀԱԱ, ֆ. 1263, ց. 2, գ. 53, թ. 2, թարգմանություն ռուսերեն  
բնագրից:

№ 3

**ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,  
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ. Օ. ՅԱՆԿՈՎՍԿՈՒ ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

16 Տե՛ս նույն տեղում, թ. 3 և շրջ. և № 1 փաստաթուղթը:

17 Տե՛ս նույն տեղում, թթ. 5-8:

18 **Գրոսման Ալեքսանդր Իգնատևիչ** (29 փետրվարի 1836 թ. – դեկտեմբեր, 1890 թ.) – 1880 թ. փետրվարի 19-ին ստացել է գեներալ-մայորի կոչում, 1889 թ. օգոստոսի 30-ին՝ գեներալ-լեյտենանտի: 1883 թ. նշանակվել է Կարսի գեներալ-նահանգապետ, ապա՝ նույն թվականին՝ Թիֆլիսի, իսկ 1887 թ.՝ Քուբայիսի:

**ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻՆ՝ «ՀԱՅ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՒ ՀԱՅ ՔՈՅՐԵՐ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ԹՌՈՒՅԻԿՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԱՐԽԻՎ

Թիվ 18

9 ապրիլի 1885 թ.

Գաղտնի

Թիֆլիս

Թիֆլիսում՝ զինվորական շուկայի մսավաճառներին հատկացված շարքում, հայտնաբերվել է հայերենով գրգռիչ մի թռուցիկ՝ «Հայ եղբայրներ եւ հայ քոյրեր» վերնագրով, որը տպագրվել է հայկական դպրոցների փակման առիթով: Թռուցիկի ներքևում տպված է «Ազատ տպարան, 22 փետրվարի 1885 թ.»:

Ռուսերեն թարգմանված այս թռուցիկը կներկայացնեմ լրացուցիչ: Մեղավորներին հայտնաբերելու ուղղությամբ միջոցներ են ձեռնարկվել:

Գեներալ-մայոր Յանկովսկի

ՀԱԱ, ֆ. 1263, ց. 2, գ. 53, թ. 4, թարգմանություն ռուսերեն բնագրից:

**№ 4**

**ԹԻՖԼԻՍԻ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,  
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ. Օ. ՅԱՆԿՈՎՍԿՈՒ ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Ա. Ի. ԳՐՈՍՄԱՆԻՆ՝  
ՈՒՂԱՐԿՎԱԾ «ՀԱՅ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՒ ՀԱՅ ՔՈՅՐԵՐ»  
ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ԹՌՈՒՅԻԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՅՈՒՅԻՉ  
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Թիվ 184

12 ապրիլի 1885 թ.

Գաղտնի

Թիֆլիս

Թիֆլիսի նահանգապետին

Ի հավելումն սույն թվականի ապրիլի 8-ին Ձերդ գերազանցության ուղարկած թիվ 77 գրության և կից «Հայ եղբայրներ եւ հայ

Վէճ համահայկական հանդես, ժե (ԻՎ) րարի, թիվ 3 (83), հուլիս-սեպտեմբեր, 2023

քոյրեր» վերնագրով թռուցիկի՝ խոնարհաբար խնդրում եմ տեղեկացնել, թե ում կողմից և երբ է նշված թռուցիկը գտնվել և ներկայացվել Ձերդ գերազանցությանը:

[Գեներալ-մայոր Յանկովսկի]

ՀԱԱ, ֆ. 1263, ց. 2, գ. 53, թ. 9, թարգմանություն ռուսերեն  
բնագրից:

№ 5

**ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽՆԱՀԱՆԳԱՊԵՏ, ԻՇԽԱՆ Գ. Գ. ՇԵՐՎԱՇԻՁԵ  
ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ  
ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ  
Վ. Օ. ՅԱՆԿՈՎՍԿՈՒՆ՝ «ՀԱՅ ԵՂՔԱՅՐՆԵՐ ԵՒ ՀԱՅ ՔՈՅՐԵՐ»  
ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ԹՈՒՌՅԻԿԻ ՄԱՍԻՆ**

Թիվ 81

12 ապրիլի 1885 թ.

Գաղտնի

Թիֆլիս

Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետին

Սույն թվականի ապրիլի 12-ի թիվ 187 գրության առնչությամբ պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը ծանուցելու, որ Թիֆլիսի նահանգապետի Ձեզ ուղարկած «Հայ եղբայրներ եւ հայ քոյրեր» վերնագրով թռուցիկն ապրիլի 1-ին հայտնաբերվել է Թիֆլիսի 3-րդ քաղաքամասում գտնվող զինվորական շուկայի մսավաճառներին հատկացված մասում՝ Մուխրանսկի փողոցի Մարկարովի տանը բնակվող կապիտան Եվգենի Իոսիֆովիչ Դոբրովոլսկու կողմից, որն ապրիլի 3-ին այն ներկայացրել է Թիֆլիսի ոստիկանապետին, իսկ վերջինս ամսի 5-ին՝ պ. նահանգապետին:

Նահանգապետի փոխարեն՝ իշխան Շերվաշիձե

Գրասենյակի պետ՝ Լյախով

Կարավարչի օգն. պաշտոնակատար՝ Մ. Վ. Տրոցկի

ՀԱԱ, ֆ. 1263, ց. 2, գ. 53, թ. 10, թարգմանություն ռուսերեն  
բնագրից:

№ 6

**ԹԻՖԼԻՍԻ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,**

**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ. Օ. ՅԱՆԿՈՎՍԿՈՒ ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻՆ՝ «ՀԱՅ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՒ ՀԱՅ  
ՔՈՅՐԵՐ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ԹՌՈՒՅԻԿԻ ԳՈՐԾՈՎ ՍԿՍՎԱԾ  
ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

ԱՐԽԻՎ

Գաղտնի

Թիվ 192  
13 ապրիլի 1885 թ.  
Թիֆլիս

Ի լրումն այս տարվա ապրիլի 9-ի թիվ 185 զեկույցիս՝ պատիվ ունեն ներկայացնելու «Հայ եղբայրներ եւ հայ քոյրեր» վերնագրով թռուցիկի թարգմանությունը՝ միաժամանակ հայտնելով, որ Կովկասյան գրաքննչական կոմիտեի նախագահի կողմից թռուցիկի տառատեսակի ստուգման հետևանքով պարզվել է, որ այդ տառատեսակը չի համապատասխանում կովկասյան տարածաշրջանում գործող հրատարակչություններից ոչ մեկի տառատեսակին, ուստի պետք է ենթադրել, որ այն տպագրվել է արտասահմանում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրապարակային հետաքննության անցկացումը ոչ միայն չի նպաստի մեղավորների բացահայտմանը, այլև կստիպի նրանց ավելի զգույշ լինել և զգուշորեն թաքցնել հանցավոր արարքների հետքերը, այս գործի առնչությամբ ես իրականացնում եմ գաղտնի հետաքննություն:

Գեներալ-մայոր [Յանկովսկի]

ՀԱԱ, ֆ. 1263, ց. 2, գ. 53, թ. 4 շրջ., թարգմանություն ռուսերեն բնագրից:

Վէճ համահայկական հանդես, ԺԵ (ԻԱ) րորի, թիվ 3 (83), հուլիս-սեպտեմբեր, 2023

**ԵԼԻՋԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ, ԻՇԽԱՆ  
Ա. Գ. ՆԱԿԱՇԻՁԵԻ ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ  
ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ. Օ.  
ՅԱՆԿՈՎՍԿՈՒՆ՝ ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ԵԼԻՋԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆ ՕՐԼՈՎԻՑ  
ՍՏԱՅՎԱԾ ԹՌՈՒՅԻԿԸ ԵՎ ԴՐԱ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ  
ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Թիվ 170

4 մայիսի 1885 թ.

Ելիզավետպոլ

Գաղտնի

Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետին

Երևանի և Ելիզավետպոլի նահանգների ժողովրդական ուսումնարանների տնօրեն, կոլեգիալ խորհրդական Օրլովն այսօր ինձ ներկայացրեց հայկական դպրոցների փակման առիթով հայ ազգին ուղղված հայերենով տպագրված մի թռուցիկ և դրա թարգմանությունը, որը պարունակում է Նորին մեծության և պետական բարձրագույն անձանց հասցեին խիստ վիրավորական արտահայտություններ:

Ընդ որում, իշխան Օրլովը հայտարարեց, որ սույն թռուցիկը ստացել է մայիսի 9-ին փոստային բաժանմունքից, իրեն հասցեագրված ծրարով, ծառայողական նամակագրության հետ:

Կից ներկայացնելով Ձերդ գերազանցությանը ժողովրդական ուսումնարանների տնօրենի ինձ ներկայացրած վերոհիշյալ թռուցիկի թարգմանության պատճենը՝ պատիվ ունեմ տեղեկացնելու, որ դրա օրինակները փոխանցել եմ նաև Թիֆլիսի դատական պալատի և Ելիզավետպոլի շրջանային դատարանի դատախազներին, ապա թռուցիկը փոխանցել եմ Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին:

Գեներալ-մայոր, իշխան Նակաշիձե<sup>19</sup>

19 Ալեքսանդր Դավթի Նակաշիձե (1837-1906) – հեծելազորի գեներալ, Ելիզավետպոլի նահանգապետ, Կովկասյան և Ղրիմի պատերազմների, ինչպես նաև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հերոս:

Գրասենյակի կառավարիչ՝ գնդապետ Կեցենկե  
ՀԱԱ, ֆ. 1263, ց. 2, գ. 53, թ. 11 և շրջ., թարգմանություն ռուսերեն  
բնագրից:

ԱՐԽԻՎ

№ 8

**ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,  
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ. Օ. ՅԱՆԿՈՎՍԿՈՒ ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻՆ**

Գաղտնի

Թիվ 242  
14 մայիսի 1885 թ.  
Թիֆլիս

Ի լրումն իմ՝ սույն թվականի ապրիլի 9-ի թիվ 185 և ապրիլի 13-ի թիվ 192 զեկույցների ներկայացնելով հայկական դպրոցների փակման առիթով տպագրված «Հայ եղբայրներ եւ հայ քոյրեր» վերնագրով թռուցիկի թարգմանությունը՝ պատիվ ունեմ տեղեկացնելու, որ գաղտնի քննությամբ չի պարզվել, որ թռուցիկը տարածվել է հայերի մեջ և ազդեցություն է ունեցել ազգաբնակչության մտածելակերպի վրա: Մայիսի 9-ին Ելիզավետպոլ քաղաքի ժողովրդական ուսումնարանների տնօրեն Օրլովը փոստով ստացել է նույն թռուցիկը հայերենով:

Գեներալ-մայոր [Յանկովսկի]

ՀԱԱ, ֆ. 1263, ց. 2, գ. 53, թ. 18, թարգմանություն ռուսերեն  
բնագրից:

Վէճ համահայկական հանդես, ժե (ԻԱ) տարի, թիվ 3 (83), հուլիս-սեպտեմբեր, 2023

№ 9

**ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,  
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ. Օ. ՅԱՆԿՈՎՍԿՈՒ ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ  
ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ՝ ՕՐԼՈՎԻ ՍՏԱՅԱԾ ԹՌՈՒՑԻԿՆ ՈՒ ԾՐԱՐՆ ԻՐԵՆ  
ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ**

Թիվ 245

16 մայիսի 1885 թ.

Թիֆլիս

Գաղտնի

Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի  
գրասենյակին

Մայիսի 11-ին Ելիզավետպոլի նահանգապետը թիվ 170 գրու-  
թյամբ ինձ տեղեկացրեց, որ Նորին գերագանցություն Կովկասի քա-  
ղաքացիական մասի կառավարչապետին է ուղարկել Ելիզավետպո-  
լի ժողովրդական ուսումնարանների տնօրեն Օրլովի ստացած հայե-  
րեն թռուցիկը:

Գործի հանգամանքները քննելու և պարզելու համար, թե թռու-  
ցիկն ինչպես է ուղարկվել Օրլովին, խոնարհաբար խնդրում եմ, մի-  
այն Նորին գերագանցություն իշխան Դոնդուկով-Կորսակովի թույլ-  
տվությամբ, ուղարկել ինձ այդ թռուցիկը և ծրարը, որով այն ստաց-  
վել է:

Գեներալ-մայոր [Յանկովսկի]

ՀԱԱ, ֆ. 1263, ց. 2, գ. 53, թ. 19, թարգմանություն ռուսերեն  
բնագրից:



№ 10

**ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ  
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՏՆՕՐԵՆԻ ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ  
ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-  
ՄԱՅՈՐ Վ. Օ. ՅԱՆԿՈՎՍԿՈՒՆ՝ ԹՌՈՒՑԻԿԻ ՈՒ ԾՐԱՐԻ՝ ԹԻՖԼԻՍԻ  
ԴԱՏԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԴԱՏԱԽԱՁԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Թիվ 4777

18 մայիսի 1885 թ.

Գաղտնի

Թիֆլիս

Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետին

Մայիսի 16-ի թիվ 245 գրության առնչությամբ պատիվ ունեն հայտնելու Ձերդ գերազանցությանը, որ ժողովրդական ուսումնա-րանների տնօրեն Օրլովի՝ փոստով ստացած թռուցիկը ծրարի հետ փոխանցել եմ Թիֆլիսի դատական պալատի դատախազին՝ սույն թռուցիկի ծագման և հրապարակման վայրի հետաքննության համար:

Տնօրեն՝ գեներալ-մայոր Շեպելև

ՀԱԱ, ֆ. 1263, ց. 2, գ. 53, թ. 20, թարգմանություն ռուսերեն  
բնագրից:

№ 11

**ԹԻՖԼԻՍԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԴԱՏԱԽԱՁ ՎԱԼԵՐԻ ԱԼԵՔՍԵԵՎԻՉ  
ԱՆԴՐԵԵՎԻ ԳԱՂՏՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ  
ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ  
Վ. Օ. ՅԱՆԿՈՎՍԿՈՒՆ՝ ԹՌՈՒՑԻԿԻ ՈՒ ԾՐԱՐՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Թիվ 114

20 մայիսի 1885 թ.

Գաղտնի

Թիֆլիս

Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետին

ԱՐԽԻՎ

ՎԷՃ համահայկական հանդես, ԺԵ (ԻՆ) րարի, թիվ 3 (83), հուլիս-սեպտեմբեր, 2023

Ելնելով Կովկասի քաղաքացիական մասի գրասենյակի տնօրենի մայիսի 18-ի թիվ 4775 գրությունից՝ պատիվ ունեն Ձերդ գերագանցությանը փոխանցելու հայկական դպրոցների փակման մասին տպագրված հայերեն թռուցիկը ծրարով, որը փոստով ստացել էր Ելիզավետպոլի և Երևանի նահանգների ժողովրդական ուսումնարանների տնօրեն, կոլեգիալ խորհրդական Օրլովը: Միաժամանակ խնդրում եմ տեղեկացնել ինձ հետագա քայլերի մասին:

Թիֆլիսի դատական պալատի դատախազ՝ Անդրեն

ՀԱԱ, ֆ. 1263, ց. 2, գ. 53, թ. 21, թարգմանություն ռուսերեն  
բնագրից:

**Գոհար Գ. Ավագյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է 19-20-րդ դդ. հայ եկեղեցու, Հայոց ցեղասպանության և Սփյուռքի պատմությունը: Հիշյալ թեմաներով կազմել և հրատարակել է շուրջ 30 հատոր փաստաթղթերի ժողովածուներ:

Էլ. հասցե՝ gohar-arkhiv@mail.ru

Summary

## THE FIRST LEAFLET OF CHRISTAPOR MIKAELIAN

On the closing of the Armenian schools in February, 1885

Gohar G. Avagyan

*Candidate of Sciences in History*

**Key words** – Armenian church-parochial schools, educational work, closing of schools, absorption policy, national-narodnik' group of Tiflis, leaflet, investigation.

In 1828-1829, after the annexation of other territories of the Transcaucasian region of Eastern Armenia to Russia, in the course of realization of the colonial and strengthening policy pursued by the tsarist government, a certain place was given to the field of education. The main goal was to increase the role of the Russian

language in the region, and then from childhood to instill in the pupils a sense of submission and loyalty to the Russian throne and to prepare persons with certain professional qualifications to contribute to the economic development of the backward region.

From the beginning of the 1880s the policy of national oppression and destruction of "non-orthodox" religions gained new momentum in Russia. In parallel, several secret groups and organizations were established among Transcaucasian Armenians, whose aim was to spread patriotic ideas, preserve and develop the Armenian language and schools, as well as the political struggle for the liberation of Armenia from the tsarist and sultanic yoke. One of these secret groups in 1882 was the Tiflis narodnik underground circle.

On February 16, 1884, the Tsar approved new rules for Armenian church schools, which significantly restricted the rights of the Mother See monastery in the education of Armenian children. In 1885, all schools that did not accept the new rules were closed in the Russian Empire.

The narodnik circle of Tiflis distributed the leaflet "ARMENIAN BROTHERS AND ARMENIAN SISTERS", which sharply criticized the authorities and their policies, first of all by explaining the role of school and education in preserving national identity and ensuring its development. The same leaflet urged Armenians to fight against "Russian tyrants" with all their might.

In connection with this leaflet, the Tiflis gendarmerie department opened a case and conducted an investigation.

This collection presents the documents kept in the fonds of the Tiflis regional gendarmerie department of the National Archives of Armenia.

## ПЕРВАЯ ЛИСТОВКА ХРИСТОФОРА МИКАЕЛЯНА

О закрытии армянских школ в 1885 г.

Гоар Г. Авагян

*Кандидат ист. наук*

**Ключевые слова** - армянские церковно-приходские школы, образование, закрытие школ, политика отчуждения, национально-народнический кружок Тифлиса, листовки, дознание.

В ходе осуществления своей колониальной политики в Закавказском крае царское правительство определенное место отводило области просвещения. Главной целью было повысить роль русского языка в регионе, с детства привить воспитанникам чувства верноподданства и преданности русскому престолу и подготовить лиц, имеющих определенную профессиональную квалификацию, для содействия экономическому развитию отсталого края.

С начала 1880-х гг. в царской России новый размах получила политика национального гнета и параллельно этому среди закавказских армян было создано несколько тайных кружков и организаций, целью которых было распространение патриотических идей, сохранение и развитие армянского языка и школ, а также политическая борьба за освобождение Армении от царского и султанского ига.

16 февраля 1884 г. царем (императором) были утверждены новые правила об армянских церковных школах, которыми значительно ограничивались права Первопрестольного Св. Эчмиадзина в образовательном деле армянских детей, а в 1885 году на территории Российской империи были закрыты все школы, не принявшие новые правила.

Поэтому созданный в 1882 г. в Тифлисе подпольный армянский национально-народнический кружок, возглавляемый будущим основателем АРФ Дашнакцутюн Христофором Микаеляном, распространил листовку «АРМЯНСКИЕ БРАТЬЯ И АРМЯНСКИЕ СЕСТРЫ», в котором, разъясняя роль школы и образования в сохранении национальной идентичности и обеспечении ее развития, резко критиковалась царская власть и ее политика. Ав-

торы листовки призывали армян всеми силами бороться против «русской тирании».

В связи с распространением этой листовки Тифлисское жандармское управление возбудило дело и провело расследование. В данной публикации представлены документы, хранящиеся в фонде Тифлисского областного жандармского управления Национального архива Армении.

## REFERENCE

1. НАА, ф. 56, ts'. 1, g. 7278, ts'. 2, gg. 935, 1087, ts'. 15, gg. 50, 113; ф. 1263, ts'. 2, g. 53; ф. 1292, ts'. 1, g. 69 (**In Armenian**).